

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱԿԱԴՊՊԻՆԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ



2011

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱԿԱԴՊՊԻՆԳԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն կանոններով սահմանվում են Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի (այսուհետ՝ ՀԱՕԿ) կողմից ընդունվող և ՀԱՕԿ –ի անդամների կողմից պարտադիր կիրառման ենթակա հակադոպինգային կանոնները (այսուհետ՝ Կանոններ):

2. Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն՝ հիմք ընդունելով Համաշխարային Հակադոպինգային Գործակալության (այսուհետ՝ ՀՀԳ) Օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք, ընդունվել է 2004 թվականի հունվարի 12-ին), ընդունում է սույն հակադոպինգային կանոնները: Սույն Կանոնները համապատասխանեցված են ՀՀԳ-ի Օրենսգրքին: Սույնով ՀԱՕԿ-ը ստանձնում է պատավորություն՝ պայքարելու Հայաստանում դոպինգի կիրառման դեմ:

2. ՀԱՕԿ-Ի ՀԱԿԱԴՊՊԻՆԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

3. Հակադոպինգային կանոնները հետապնդում են նպատակ պահպանել արժեքավորը սպորտում: Դա վերաբերում է սպորտի ոգուն, որը օլիմպիզմի և արդարացի խաղի սկզբունքն է: Սպորտի ոգին մարդու հոգու, մարմնի և մտքի միասնությունն է, և բնութագրվում է հետևյալ արժեքներով՝

- 1) էթիկա, արդարացի խաղ և ազնվություն.
- 2) առողջություն.
- 3) անհատականության զարգացում և կրթություն.
- 4) թիմային աշխատանք .
- 5) նվիրվածություն.
- 6) հարգանք իր և մյուս մասնակիցների նկատմամբ.
- 7) հարգանք կանոնների և օրենքների նկատմամբ.
- 8) խիզախություն.
- 9) միասնական ոգի և համերաշխություն.

Դոպինգը սկզբունքորեն հակասում է սպորտի ոգուն:

3. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱԿԱԴՊՊԻՆԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

4. Համաձայն սույն Կանոնների՝ ՀԱՕԿ-ը պարտավորվում է աջակցել Հայաստանի ազգային հակադոպինգային կազմակերպությանը՝ «Սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ Կենտրոն) ՀՀ տարածքում՝ դոպինգ ստուգումներ կազմակերպելու և իրականացնելու համար:

5. Օրենսգրքի համաձայն ՀԱՕԿ-ը ունի հետևյալ պարտավորությունները՝

1) իրականացնել իր հակադոպինգային քաղաքականությունն ու կանոնները համաձայն Օրենսգրքի,

2) պահանջել, որպեսզի ազգային մարզական ֆեդերացիաների հակադոպինգային կանոնները համահունչ լինեն Օրենսգրքին,

3) պահանջել բոլոր մարզիկներից, որպես նախապայման օլիմպիական և պարաօլիմպիկ խաղերին մասնակցության, հասանելի լինել նմուշառման համար ներկայացնելով՝ հստակ տեղեկատվություն իրենց գտնվելու վայրի մասին,

4) համագործակցել Կենտրոնի հետ,

5) պահանջել յուրաքանչյուր ազգային մարզական ֆեդերացիայից, մարզիկից, մարզիկին աջակցող յուրաքանչյուր անձից (մարզիչ, մեներջեր, թիմի աշխատակազմ, պաշտոնյա կամ բժշկական անձնակազմ) ընդունել և հարգել ՀՀ Հակադոպինգային կանոնները և Օրենսգրքը,

6) աբողջովին կամ մասնակի զրկել Ֆինանսական կամ այլ նյութական օգնությունից այն ազգային մարզական ֆեդերացիաներին, որոնք չեն ենթարկվում կամ անտեսում են սույն կանոնները կամ Օրենսգրքը

7) ամբողջովին կամ մասնակի զրկել Ֆինանսական կամ այլ նյութական օգնությունից այն մարզիկներին, մարզիկին աջակցող անձանց (մարզիչ, թիմի աշխատակազմ, բժշկական անձնակազմ), որոնք չեն ենթարկվում կամ անտեսում են սույն կանոնները կամ Օրենսգրքը,

8) կանխարգելել Հակադոպինգային կանոնների բոլոր հնարավոր խախտումները, իրականացնել լսումներ հակադոպինգային կանոնների խախտումների վերաբերյալ,

9) աջակցել հակադոպինգային ծրագրերի իրականացմանը,

10) համագործակցել համապատասխան ազգային հակադոպինգային կազմակերպությունների և այլ երկրների հակադոպինգային կազմակերպությունների հետ:

4. ՀԱԿԱԴՊՊԻՆԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

6. Սույն կանոնները կիրառվում են հետևյալ կազմակերպությունների նկատմամբ՝

- 1) ՀԱՕԿ,
- 2) մարզիկներ,
- 3) մարզական կազմակերպություններ,
- 4) մարզիկին աջակցող անձնակազմ,
- 5) ազգային մարզական ֆեդերացիաներ:

7. Պատժամիջոցները կիրառվում են ցանկացած հակադոպինգային կանոնների խախտման դեպքում:

5. ՄԱՐԶԻԿՆԵՐԻ, ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. Բոլոր մարզիկները պարտավոր են՝

- 1) լինեն տեղեկացված ազգային հակադոպինգային քաղաքականությանը, սույն կանոններին և Օրենսգրքին,
- 2) լինել հասանելի դոպինգ ստուգման նմուշառման համար,
- 3) կրել պատասխանատվություն իրենց կողմից օգտագործվող նյութերի վերաբերյալ,
- 4) բժշկական օգնություն (բուժում) ստանալու ժամանակ տեղեկացնել բժշկական օգնություն իրականացնող անձնակազմին այն մասին, որ նրանց պարտականությունն է չօգտագործել արգելված նյութեր և մեթոդներ, որպեսզի չխախտվեն Հակադոպինգային կանոնները:

9. Բոլոր մարզիկները, ովքեր մարզվում կամ բնակվում են ՀՀ տարածքից դուրս, պետք է լինեն հասանելի նմուշառման համար և պետք է ներկայացնեն հստակ տեղեկատվություն իրենց գտնվելու վայրի մասին, որպես նախապայման օլիմպիական խաղերի մասնակցության:

10. Մարզիկին աջակցող անբողջ անձնակազմը պարտավոր է՝

- 1) լինի տեղեկացված սույն կանոններին և Օրենսգրքին,
- 2) համագործակցել մարզիկների դոպինգ ստուգումն իրականացնող կազմակերպությունների հետ,
- 3) նմուշառման ժամանակ օգտագործել իրենց ազդեցությունը մարզիկի վրա:

11. Յուրաքանչյուր ազգային մարզական ֆեդերացիա պարտավոր է՝

- 1) իրականացնել իր հակադոպինգային քաղաքականությունը համաձայն սյուն կանոնների,
- 2) աջակցել Կենտրոնին կատարելու իր հակադոպինգային պարտավորությունները,
- 3) ընդունել և իրականացնել ՀԱՕԿ-ի հակադոպինգային քաղաքականությունը,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱԿԱԴՊՊԻՆԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

4) աջակցել իր միջազգային ֆեդերացիային, իրականացնելու հակադոպինգային ծրագրերը,

5) պահանջել իր այն անդամներից ճանաչել Օրենսգրքը և ՀԱՕԿ-ի կանոնները,

ա. ուլքեր՝ մասնակցում են մրցումներին,

բ. ուլքեր՝ ազգային մարզական Ֆեդերացիայի կողմից գրանցված են որպես մարզիկ կամ որպես մարզիկին աջակցող անձ,

6) պահանջել իր այն անդամներից ուլքեր՝ մասնակցում են մրցումներին, լինել հասանելի դոպինգ ստուգման նմուշառման համար,

7) պահանջել, որպեսզի իր կազմակերպությունների հակադոպինգային քաղաքականությունը, կանոններն ու ծրագրերը համապատասխանեն Օրենսգրքին,

8) աջակցել ՀԱՕԿ-ին, իր կանոնները համապատասխանեցնելու Օրենսգրքին,

9) ճանաչի և հարգի իր միջազգային ֆեդերացիայի, ՀԱՕԿ-ի, Կենտրոնի, կամ այլ ազգային մարզական ֆեդերացիայի հակադոպինգային կանոնների խախտման վերաբերյալ որոշումները, եթե դրանք չեն հակասում Օրենսգրքին և գտնվում են նշված կազմակերպությունների իրավասության ներքո,

10) պահանջի Հայաստանի օլիմպիական թիմի մարզիկներից, ուլքեր մարզվում կամ բնակվում են ՀՀ տարածքից դուրս, լինել հասանելի նմուշառման համար և մշտապես տրամադրել հստակ տեղեկատվություն իրենց գտնվելու վայրի մասին,

11) իր իրավասության կամ հսկողության ներքո գտնվող ցանկացած անձի Հակադոպինգային կանոնների խախտման և այդ խախտման համար նշանակված պատժաչափի մասին տեղեկացնել ՀԱՕԿ-ին,

12) սույն կանոնների շրջակներում ՀԱՕԿ-ի Գլխավոր քարտուղարի պահանջով իրականացնել համապատասխան անհրաժեշտ գործողություններ:

6. ԴՊՊԻՆԳ ՍՏՈՒԳՈՒՄ

12. ՀԱՕԿ-ի կողմից ճանաչվում են Կենտրոնի, կամ այլ Հակադոպինգային կազմակերպության կողմից իրականացվող դոպինգ ստուգման արդյունքները, եթե նրանք իրականացվել են Օրենսգրքի համաձայն, ՀՀԳ-ը կողմից հավատարմագրված լաբորատորիայում:

7. ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

13. Հակադոպինգային կանոնների խախտում է համարվում Օրենսգրքի 1, 2, 3, 4, 5, 6 և 17 հոդվածների խախտումը:

14. Օրենսգրքի 1, 2, 3, 4, 5, 6 հոդվածները կիրառվում են որոշելու համար Հակադոպինգային կանոնի խախտման առկայությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱԿԱՂՊՊԻՆԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

15. Ազգային մարզական ֆեդերացիաների կողմից սույն կանոնների խախտումը նշանակում է ՀԱՕԿ-ի նկատմամբ ունեցած նրա պարտավորությունների խախտում:

8. ՀԱԿԱՂՊՊԻՆԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԾԱՆԱԶՈՒՄ

16. ՀԱՕԿ-ի կողմից ճանաչվում են բոլոր հակադոպինգային կազմակերպությունների կողմից հակադոպինգային կանոնների խախտման մասին ընդունված որոշումները, եթե այդ որոշումները համապատասխանում են Օրենսգրքին:

9. ՀԱՕԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

17. Յուրաքանչյուր անձ, ով կատարել է հակադոպինգային կանոնների խախտում, չի կարող լինել ՀՀ Օլիմպիական թիմի կազմում, ֆինանսավորվել ՀԱՕԿ-ի կողմից կամ պաշտոն զբաղեցնել ՀԱՕԿ-ում:

18. Որակազրկման յուրաքանչյուր պատժաչափը որոշվում է համաձայն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ հոդվածների:

19. ՀԱՕԿ-ը իր հերթական պատժաչափը նշանակելուց հաշվի է առնում և ներառում յուրաքանչյուր հակադոպինգային կազմակերպության, միջազգային ֆեդերացիայի կամ ազգային մարզական ֆեդերացիայի կողմից կիրառված նախորդ որակազրկման պատժաչափը:

10. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

20. Ազգային կամ միջազգային հակադոպինգային կազմակերպությունների կողմից հակադոպինգային կանոնների խախտման վերաբերյալ ընդունված որոշումները քննարկվում են ՀԱՕԿ-ի Բողոքարկման Հանձնախմբի կողմից, համաձայն ՀՀ հակադոպինգային կանոնների և Օրենսգրքի:

21. ՀԱՕԿ-ի բողոքարկման հանձնախումբը իրավասու է կարգավորել իր ընթացակարգը համաձայն ՀՀ հակադոպինգային կանոնների և Օրենսգրքի:

11. ԾԱՆՈՒՑՅՈՒՄ

22. Սույն կանոնների համաձայն կիրառված պատժամիջոցների վերաբերյալ ՀԱՕԿ-ը պետք է ուղարկի մանրամասն տեղեկատվություն`

1) Միջազգային Օլիմպիական կոմիտե,

2) այն անձանց, ովքեր պետք է տեղեկացված լինեն համաձայն Օրենսգրքի 14.1 հոդվածի,

3) համապատասխան ազգային մարզական ֆեդերացիային,

4) Կենտրոնին,

5) ՀՀԳ-ին ,

6) յուրաքանչյուր այլ անձի կամ կազմակերպության, որոնք՝ ՀԱՕԿ-ի համոզմամբ, պետք է տեղեկացված լինեն:

12. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

23. Միայն ՀՀ Հակադոպինգային կանոնների 13-րդ գլխում նշված անձինք, իրավունք ունեն բողոքարկել հակադոպինգային կանոնների խախտման վերաբերյալ որոշումները ՀԱՕԿ-ի Բողոքարկման հանձնախմբին: Այն դեպքում, եթե անձը բողոքարկում է հակադոպինգային կազմակերպության կամ համապատասխան ազգային մարզական ֆեդերացիայի որոշումը, ապա ՀԱՕԿ-ը պետք է հետաձգի հակադոպինգային կանոնի խախտման ճանաչումը, մինչև ՀԱՕԿ-ի Բողոքարկման հանձնախմբի եզրակացություն կայացնելը:

24. ՀԱՕԿ-ի Բողոքարկման հանձնախմբի որոշումները կարող են բողոքարկվել համաձայն Օրենսգրքի 13-րդ հոդվածի դրույթների:

13. ՀԱԿԱԴՊՊԻՆԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

25. Եթե անձը գրանցված է որպես հակադոպինգային կանոնի խախտում կատարող, սակայն հետագայում պազվում է՝

- 1) որ նա չի կատարել կանոնի խախտում,
- 2) նրան ներում է շնորհվում միջազգային մարզական արբիտրաժային դատարանի կողմից,
- 3) ներում է շնորհվում որևէ այլ միջազգային հակադոպինգային կազմակերպության բողոքարկման մարմնի կողմից,

ապա ՀԱՕԿ-ը չեղյալ է համարում հակադոպինգային կանոնի խախտումը և ցանկացած պատժամիջոց, որը կիրառվել է տվյալ խախտման համար:

26. ՀԱՕԿ-ը հայտնում է իր որոշման մասին բոլոր այն անձանց, ովքեր պետք է տեղեկացված լինեն համաձայն Օրենսգրքի 9րդ հոդվածի:

14. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

27. Սույն կանոններում կատարվող փոփոխությունները և լրացումները պետք է համապատասխանեն Օրենսգրքին: